

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի

Շահառուների խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 24-ին ժամը 16:00-ին կայացած նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

<i>Ասատրյան Լիլիթ</i>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<i>Սողոմոնյան Մյուզաննա, Կարեն Զադոյանի լիազոր ներկայացուցիչ</i>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<i>Զարուհի Արմադանյան, Լիա Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ</i>	«Զարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<i>Համբարձումյան Սասուն</i>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<i>Հովհաննիսյան Միհրան</i>	«Եղվարդ» ՋՕԸ
<i>Մաիլյան Նարինե</i>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<i>Դորունգ Արտաշես, Կարինե Մովսիսյանի լիազոր ներկայացուցիչ</i>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<i>Միքայելյան Շիրակ</i>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
<i>Շահինյան Պողոս</i>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<i>Ոսկանյան Արման</i>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<i>Վերանյան Անդրանիկ</i>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ
<i>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</i>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
<i>Ենգիբարյան Վիկտոր</i>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
<i>Նազարյան Հազարասյետ</i>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<i>Դազարյան Տոնական</i>	«Շենիկ» ՋՕԸ

Նիստին մասնակցում էին նաև՝

<i>Արա Հովսեփյան</i>	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Նանե Աճեմյան</i>	Մամլո քարտուղար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Նորա Մարտիրոսյան</i>	Գլխավոր իրավախորհրդատու, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Հերմինե Գիլանյան</i>	Ոռոգման ենթակառուցվածքի ինժեներ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Աննա Սարգսյան</i>	Ոռոգման ծրագրի մասնագետ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Արմինե Միմոնյան</i>	Բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Սերգեյ Սերոյան</i>	Ջրից դեպի շուկա բաղադրիչի մասնագետ, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<i>Վաղարշակ Կանայան</i>	Վարկերի մոնիտորինգի գլխավոր մասնագետ, ԳՖԿ
<i>Ռոն Բիլեն</i>	Վարկային ծրագրի փորձագետ/խորհրդատու, ԷյՄԻԳԻԱյ/Վոկա կազմակերպություն
<i>Ալեքսանդր Ֆրունջյան</i>	Վարկային ծրագրի փորձագետ/խորհրդատուի օգնական, ԷյՄԻԳԻԱյ/Վոկա կազմակերպություն
<i>Թամարա Աբրահամյան</i>	«Արագ» ՀԿ

Հաշվի առնելով այն փաստը, որ ՇԽ յուրաքանչյուր հաջորդ նիստի նախագահող ընտրվում են ՇԽ անդամները ըստ իրենց անունների այբենական դասավորվածության՝ ՇԽ ճրդ նիստը

նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ Լիա Խաչատրյանի փոխարինող Ջարուիի Արմադանյանի թեկնածությունը և հաստատվեց միաձայն:

Նախահագողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը: Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ «Կառավարման խորհրդի Բնապահպանական դիտորդի համար ներկայացված հայտերի դիտարկում և քննարկում», եղան հետևյալ առաջարկությունները՝

տեղափոխել հարցը որպես օրակարգի առաջին հարց,

քննարկել այլ հարցերի շրջանակներում:

ՀՄՀ-Հայաստանի Բնապահպանական և սոցիալական հարցերի ղեկավար Արմինե Մինոնյանը ներկայացրեց բնապահպանական դիտորդի վերահայտարարության գործընթացը և արդյունքում ստացված դիմումները, որոնք երեքն էին: Հաշվի առնելով ներկայացված տեղեկատվությունը և հայտերի անբավարար քանակը՝ ՇԽ անդամները որոշեցին Բնապահպանական դիտորդի ընտրության **հայտերի վերջնաժամկետը** երկարաձգել, իսկ հարցի քննարկումը տեղափոխել «այլ հարցեր»: ՇԽ անդամ Մ. Հովհաննիսյանն առաջարկեց «այլ հարցերում» որպես տեղեկատվություն լսել նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրից դուրս մնացած միջոցառումների իրականացման ուղղությամբ աշխատանքային խմբի կողմից իրականացրած գործողությունների ընթացքի վերաբերյալ:

Ընդունելով վերոնշյալ առաջարկությունները՝ օրակարգը հաստատվեց միաձայն:

N	Սկիզբը	Օրակարգի հարց	Կցվող փաստաթղթեր
1.	16:00	ՀՄՀ-Հայաստանի վարկային բաղադրիչի հետագա գործունեություն. քննարկում, դիրքորոշման ներկայացում	«Վարկային բաղադրիչի վերաբերյալ» վերանայված տեղեկանք
2.	17:00	Այլ հարցեր	

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

ՀՄՀ-Հայաստանի ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյանը ներկայացրեց վարկային ծրագրի թիմին և երրորդային կարգի ջրանցքների մասնագետներին և առաջարկեց, որ երկու ծրագրերն էլ համապատասխանաբար ներկայացվեն:

Երրորդային կարգի ջրանցքների վերականգնման ծրագրի, դրա նպատակների և խնդիրների, իրականացրած աշխատանքների մասին խոսեց Ոռոգման ենթակառուցվածքի ինժեներ Հերմինե Դիլանյանը: Նա խոսեց համակարգերի անմխիթար վիճակի, ոռոգման ջրի արդյունավետ մատակարարման գործում ներտնտեսային համակարգերի դերի մասին: Հ. Դիլանյանը ներկայացրեց համայնքների կողմից հայտերի ներկայացման գործընթացը ՀՄՀ-Հայաստան գրասենյակ և այլն:

ՇԽ անդամները մի շարք հարցեր բարձրացրեցին ծրագրի վերաբերյալ, որոնցից մի քանիսը ներկայացած են ստորև.

Ա. Տեր-Հովակիմյանը խնդրեց պարզաբանել, թե ինչ սկզբունքով են ընտրվելու այն համայնքները, որոնց ներտնտեսային ցանցը կվերականգնվի, ինչպես նաև հարց բարձրացրեց, թե արդյոք ՇԽ անդամ ՋՕԸ-երի ղեկավարները ներկայացրել են հայտեր իրենց սպասարկման ներքո գտնվող համայնքների ջրանցքների վերականգնման համար և եթե այո, չկա արդյոք շահերի բախում այդ պարագայում:

Առաջին հարցի վերաբերյալ Հ. Դիլանյանը նշեց, որ ներկայացված հայտերի համար իրականացվում են նախագծային աշխատանքներ, ներկայումս, նախատեսված 200-ից 250 կմ հատվածի համար ներկայացվել են հայտեր ավելի քան 700-ի համար: Երկրորդ հարցի վերաբերյալ ՀՄՀ-Հայաստան

ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Ա. Հովսեփյանը հորդորեց ՇԽ անդամներին շահերի բախման վերաբերող հարցերը քննարկել հիմնական հարցերը սպառելուց հետո:

Թ. Աբրահամյանի կողմից հարց եղավ ջրանցքների վերանորոգման մոտեցումների, կիրառվող մեխանիզմների վերաբերյալ: Ա. Հովսեփյանը նշեց, որ կան երկու մոտեցումներ՝ առաջինը (Հայաստանյան ներկայացուցիչների կողմից)՝ իրականացնել ամբողջությամբ հիմնովին վերանորոգում, իսկ երկրորդը (արտասահմանյան գործընկերների մոտեցումը)՝ լինել ավելի ճկուն և վերանորոգումն իրականացնել ըստ անհրաժեշտության. առաջիկա պիլոտային աշխատանքներն իրականացվելու են՝ հաշվի առնելով արտասահմանի փորձառությունը:

ՇԽ անդամ Ա. Ոսկանյանը իր մտահոգությունը հայտնեց, որ այն համայնքները, որոնք զուրկ են ցանկացած ֆինանսական միջոցներից, ամբողջությամբ դուրս են մնում ծրագրից: Ոռոգման ենթակառուցվածքի մասնագետ Աննա Սարգսյանը նշեց, որ եղել են այնպիսի դեպքեր, երբ համայնքը գտել է հովանավորներ, իսկ 15% համաֆինանսավորումն անհրաժեշտ նախապայման է համայնքներին սեփականատիրոջ զգացում ներշնչելու, ավելի հոգատար վերաբերմունք դրսևորելու նպատակով:

Ա. Վերանյանը խնդրեց պարզաբանել, թե ինչ մեխանիզմներ են կիրառվելու վերանորոգված ջրանցքների պահպանության և շահագործման նպատակով: Ա. Սարգսյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստանի ծրագրի նախապայմանների շրջանակներում ՀՄՀ-Հայաստանի կողմից իրականացրած շինարարական աշխատանքների շահագործումն և պահպանումն իրականացնելու համար պետական բյուջեով նախատեսված ոճ ֆինանսական հատկացումներ:

Լ. Ասատրյանը ծրագրի մասնագետներին խնդրեց հայտնել իրենց անձնական կարծիքը, թե իրենք այս պահին որ բաղադրիչի գործունեությունն են համարում առավել կարևոր և արդյունավետ: Ա. Հովսեփյանը նշեց, որ և՛ վարկային ծրագիրը, և՛ երրորդային ջրանցքների վերականգնման բաղադրիչը չափազանց կարևոր են համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով: Ծրագրի համար դրանք ունեն տարբեր նշանակություններ, ներտնտեսային համակարգերի վերականգնումը կբերի ծրագրի համար առավել տեսանելի արդյունքների, մինչդեռ վարկայինը՝ Ջրից դեպի շուկա ծրագրի կարևոր բաղադրիչն է և շարժիչ ուժը:

Վ. Ենգիբարյանին հետաքրքրում էր այն հարցը, թե ինչու է երրորդային ջրանցքների վերականգնման ծրագիրը ընտրվել որպես միակ այլընտրանք վարկային բաղադրիչին: Այս առիթով Ա. Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստան թիմը այս եզրահանգման հանգել է ՀՄԿ-ի հետ համատեղ ուսումնասիրությունների և քննարկման արդյունքում, բացի այդ, այն առավելագույնս մոտ է Ջրից դեպի շուկա ծրագրի նպատակներին:

ՇԽ անդամ Տ. Դազարյանը հայտնեց իր կարծիքը, որ երրորդային ջրանցքները գտնվում են անմխիթար վիճակում, նաև հարցրեց, թե ջրանցքը վերանորոգումից հետո ում սեփականությունն է հանդիսանալու: Նշվեց, որ համայնքին:

Առաջարկություն եղավ լսել նաև Ջրից դեպի շուկա բաղադրիչը ներկայացնող թիմին, որից հետո ծավալել քննարկում:

Ջրից դեպի շուկա ծրագրի մասնագետ Ս. Մելոյանը իր խոսքում շեշտադրում արեց առաջիկայում վարկային ծրագրի իրականացումը բարելավելու նպատակով թիմի կողմից իրականացրած քննարկումների և միջոցառումների վրա: Մասնավորապես նշեց, որ որոշվել է առաջիկայում վարկերը տրամադրել ավելի նպատակային և դրանք ուղղորդել դեպի ծրագրի հիմնական գերակայություններ: Որոշվել է կենտրոնացնել վարկերի տրամադրումը դեպի միջին և միջինից ցածր եկամուտ ունեցող ֆերմերներ, ինչպես նաև խրախուսել ցածր տոքոսադրույքները գյուղատնտեսական վարկավորման շրջանում:

Վարկային բաղադրիչի գործունեության վերաբերյալ հնչեցին մի շարք հարցեր:

ՇԽ անդամ Ա. Վերանյանը խնդրեց ԳՖԿ ներկայացուցչին պարզաբանել, թե ԳՖԿ-ն ինչ ծավալի, տոքոսադրույքի և ժամկետների վարկեր է տրամադրում ընդհանրապես: ԳՖԿ ներկայացուցիչ Վ. Կանայանը նշեց, որ կառույցը ներկայումս տեղաբաշխում է վարկեր՝ տրամադրված երեք դոնորների կողմից: Ներկայացվեցին նաև վիճակագրական տվյալներ:

Հազարապետ Նազարյանը հայտնեց իր մտահոգությունը, որ ֆինանսական հաստատությունները մարզերում ՀՄՀ-Հայաստանի վարկային միջոցները տեղաբաշխում են ավելի բարձր տոկոսադրույքներով, քան պարտավոր են:

Եվ՝ ՀՄՀ-Հայաստանի մասնագետ Ս. Մելոյանը, և՛ ԳՖԿ ներկայացուցիչ Վ. Կանայանը հավաստիացրեցին, որ վարկերի տրամադրման գործընթացը ամբողջովին գտնվում է ԳՖԿ-ի և ՀՄՀ գրասենյակի անմիջական հսկողության ներքո, կա հստակ գործընթաց և բոլոր պայմանագրերի օրինակները կան ՀՄՀ-ում:

Ա. Վերանյանը հարց բարձրացրեց, թե ինչպես են տնօրինվելու վարկերից ետ ստացված գումարները: Վ. Կանայանը նշեց, որ մայր գումարները մնալու են բանկերի և վարկային կազմակերպությունների տնօրինության տակ մինչ 2015թ. ԳՖԿ հսկողության ներքո: 2015թ. կառավարության հետ համատեղ քննարկման արդյունքում կորոշվի ինչպես տնօրինել այդ գումարերի հետագա ճակատագիրը:

Այնուհետև, ՇԽ անդամներից յուրաքանչյուրն արտահայտեց իր դիրքորոշումը հարցի շուրջ. ստորև համառոտ ներկայացվում են արտահայտած կարծիքները՝

Սիքայելյան Շիրակ – Ունի մեծ փորձառություն գյուղական համայնքների հետ աշխատանքում, գիտի, որ գյուղացու համար առաջնայինը ոռոգման ջուրն է. կողմ է երրորդային կարգի ջրանցքների վերականգնման բաղադրիչին:

Վերանյան Անդրանիկ – Չի տեսնում որևէ հստակ բացատրություն, թե ինչու վարկային բաղադրիչը չպետք է իրականացվի: Կարծում է երկու ծրագրերն էլ շատ կարևոր են և անհամեմատելի իրենց նպատակների առումով:

Ասատրյան Լիլիթ – Չնայած նախորդ քվեարկության ժամանակ կողմ է եղել վարկային բաղադրիչի շարունակելուն, սակայն այժմ իր հավանությունն է տալիս ներտնտեսային ջրանցքների վերականգնման ծրագրին, քանի որ վստահ է, որ առանց ջրի գյուղացուն հնարավոր չի լինի պահել գյուղում, որը անհրաժեշտ է և ունի ռազմավարական նշանակություն պետության համար: Եվ երկրորդ՝ չի կարծում, որ ներկայումս ՀՄՀ-Հայաստանի վարկային սուղ միջոցները կնպաստեն գյուղատնտեսական վարկավորման քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը, և որպես դրա պատճառներից մեկը դիտարկում է համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

Նազարյան Հազարապետ - Այն պարագայում, երբ երրորդային ջրանցքների գտնվում են անմխիթար վիճակում, ինչպես կարող է գյուղացին զարգանալ, օգտվել իր վարկից և շահել: Երրորդային կարգի ջրանցքները համարում է առաջնային: Կողմնակից է նաև վարկային բաղադրիչին:

Համբարձումյան Սասուն - Ռժվարանում է դիրքորոշում արտահայտել, քանի որ կարծում է, որ երկու ծրագրերն էլ շատ կարևոր են ազգաբնակչության համար:

Ղազարյան Տոնական – Միանշանակորեն կողմնակից է ներտնտեսային համակարգի վերականգնման ծրագրին. կարծում է, որ միայն ոռոգման ջուր ունենալու պարագայում գյուղացին կկարողանա բարելավել իր կենցաղը և հաղթահարել աղքատության շեմը:

Ոսկանյան Արման – Կողմ է վարկային բաղադրիչի շարունակելուն այն պայմանով, որ իրականացվեն լուրջ բարելավումներ:

Մախլյան Նարինե - Մնում է այն կարծիքին, որ գյուղացուն իր արտադրանքը «ջրից դեպի շուկա» իրապես հասցնելու համար ջրից զատ խիստ կարևոր է նաև ցածր տոկոսադրույքներով վարկերի ստացման հնարավորությունը:

Գոլունց Արտաշես, Կարինե Մովսիսյանի լիազոր ներկայացուցիչ – Կողմ է վարկային բաղադրիչի շարունակելուն, որն այս պարագայում ուղղված կլինի դեպի աղքատ գյուղացիները:

Ենգիբարյան Վիկտոր – Կողմ է վարկային բաղադրիչը շարունակելուն, որպես հիմնավորումներ նշվեցին վարկային ծրագրի ամբողջական իրականացումը, համաշխահային ճգնաժամի պարագայում փոքրիկ օգնություն բանկերին և վարկային կազմակերպություններին և ֆինանսական միջոցները շրջանառության մեջ դնելու օգտակարությունը:

Տեր-Հովակիմյան Ալեքսանդր – Կարծում է, որ անարդարացի է մի ծրագիրը գրկել գումարներից ի օգուտ մյուսին, այն պարագայում, երբ երկուս էլ կարևոր են: Համաձայն է այն մտքի հետ, որ միջոցները կարելի է ուղղորդել երրորդային կարգի ջրանցքների վերականգնմանը՝ մեկ անգամ դրանք շրջանառելուց հետո:

Սողոմոնյան Սյուզաննա, Կարեն Զադոյանի լիազոր ներկայացուցիչ – Կողմնակից է վարկային ծրագիրը շարունակելուն:

Զարուհի Արմաղանյան, Լիա Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ - Կողմնակից է վարկային ծրագիրը շարունակելուն:

Այսպիսով, քվեարկությունը իրականացվեց հետևյալ ձևաչափով՝

- Ռ՞վ է կողմ վարկային ծրագիրը շարունակելուն. կողմ՝ 8, ձեռնպահ՝ 1
- Ռ՞վ է կողմ վարկային ծրագրի դրամական միջոցներն ուղղել ներտնտեսային ցանցի վերականգնմանը. կողմ՝ 4, ձեռնպահ՝ 1

Ձայների պարզ մեծամասնությամբ որոշվեց, որ ՇԽ անդամները պաշտպանում են վարկային ծրագրի հետագա իրականացումը:

Նիստն ավարտվեց ժամը 18:30-ին:

Նախագահող՝

Զ. Արմաղանյան

Նիստն արձանագրեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը:

24-րդ դեկտեմբերի, 2008թ.